ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՏՆՕՐԵՆ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

30.08.2023թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶԻ«ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ

ԵՎ ԱՐՄԷՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ

ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ՀՈԳԵԲԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀՈԳԵԲԱՆ— Հ ԳԱԼՍՏՅԱՆ

Գործունեության նպատակը.

ա) կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (աշակերտներ, ծնողներ, մանկավարժներ, մանկավարժահոգեբանական աջակցության թիմ, վարչակազմ) հոգեբանամանկավարժական ուղեկցում՝ ուղղված նրանց անձնային աճին, ուսումնադաստիարակչական գործընթացում հոգեկան առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ուսումնական հաստատությունում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը,

բ) հոգեբանական աջակցության տրամադրում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին:

Վերջնարդյունք

Աշակերտների մոտ կձևավորվի թիմով աշխատելու հմտություն,կկարողանան հարթել ստեղծված կոնֆլիկտային իրավիճակները,ճիշտ կկողմնորոշվեն մասնագիտական ընտրություն կատարելիս,կձևավորեն կայուն միջանձնային հարաբերություններ:

	Բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Կազմել հոգեբանական աշխատանքների պլան՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները:	սեպտեմբեր	Հոգեբան
2	Աշխատանքները բաժանել խմբերի՝ հետազոտական /ախտորոշիչ/, կանխարգելիչ և վերականգնողական և ըստ անհրաժեշտության իրականացնել դրանք:	Տարվա ընթացքում	Հոգեբան
3	Տարրական օղակի համար մշակել և անց կացնել հոգեբանական մեթոդներ՝ զրույցներ, թեստեր, ուսումնասի-ռելու աշակերտների հուզակամային, զգացմունքային ոլորտը: Արդյունքների վերլուծությունից կախված համապատասխան խորհուրդներ տալ դասվարներին և անհրաժեշտության դեպքում նաև ծնողներին:	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ
4	Ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ անհրաժեշտության դեպքում տանել անհատական աշխատանքներ՝ տարրական դասարանների առանձին աշակերտների հետ:	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ Դասղեկ
5	Ուշադրություն դարձնել I և V դասարանցիների ադապտացիոն գործընթացին՝ դպրոցական կյանքին և միջին օղակին: Կատարել հետազոտություն այդ ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում միջամտել:	Սեպտեմբեր-նոյեմբեր	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
6	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար մշակել անհատական ուսումնական պլաններ /ԱՈԻՊ/ և մասնակցել դրանց իրականացման գործընթացին:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
7	Իրականացնել ներառական կրթության կարիք ունեցող աշակերտների առաջնային գնահատում և վերագնահատում:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
8	Սերտ համագործակցել տարածքային աջակցության կենտրոնի աշխատակիցների հետ: Իրականացնել փորձի փոխանակում տարբեր դպրոցների մասնագետների հետ, մասնակցել տարբեր վերապատրաստումների:	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. Մանկավարժ Դասղեկ-դասվարներ Ուսուցչի օգնակ.
9	1988 թ-ի երկրաշարժի զոհերի հիշատակին կազմակերպել զրույց-դաս՝ ուղղված աշակերտների սեյսմապաշտպանության վարքականոնների բարձրացմանը:	Դեկտեմբերի 7-ին	Հոգեբան
10	Կազմել հոգեկան դժվարություն և շեղումներ ունեցող աշակերտների ցանկը՝ ըստ տարիքային խմբերի: Դասղեկ-դասվարների, ուսուցչի օգնականների օգնությամբ տանել անհատական աշխատանքներ:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
11	Հայտնաբերել երեխայի անձի կայացմանը (ինքնահաստատում, ինքնադրսևորում) դժվարեցնող, խոչընդոտող պայմանները, խորհրդատվության և վերականգնողական միջոցներով օգնել աշակերտներին, մանկավարժներին, ծնողներին՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրների լուծմանը, հոգեբանական խնդիրների հաղթահարմանը:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
12	Խիստ ուշադրություն դարձնել դեռահասության տարիքին: Տարբեր մեթոդներով ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հոգեբանական աշխատանքներ տանել:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
13	Պարբերաբար իրականացնել դասալսումներ: Ուսումնասիրել բոլոր դասարանների ներխմբային փոխհարաբերությունները	Տարվա ընթացքում	Հոգեբան

	և խնդիրների դեպքում օգնել դասղեկ-դասվարներին շտկելու այն:		Դասղեկ-դասվարներ
14	Դասղեկ-դասվարների հետ միասին ըստ անհրաժեշտության մշակել անձի սոցիալականացմանն ուղղված կարիքների հաղթահարման ծրագիր՝ հաշվի առնելով աշակերտի անհատական և սեռատարիքային առանձնահատկու-թյունները:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
15	Մասնակցել օժտված երեխաների բացահայտման և նրանց ստեղծագործական ներուժի հաղթահարմանը: Կազմակերպել տարբեր բնույթի միջոցառումներ:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
16	Անհատական աշխատանքներից ելնելով՝ ըստ անհրա-ժեշտության, ստեղծել համապատասխան փաթեթներ:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
17	Ուսումնասիրել աշակերտների վարքը՝ դպրոցում, դպրոցամերձ տարածքում /ինչպես նաև դասապրոցեսից դուրս/:	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
18	Աշխատանքներ տանել աշակերտների, մանկավարժների, ծնողների սոցիալ-հոգեբանական իրազեկության բարձրաց-մանն ուղղված: Քննարկումներ ծնողների հետ «Ծնողական ակումբի»շրջանակներում	Տարվա ընթացքում	Հոգեբան Դասղեկ-դասվարներ
19	Ապահովել աշակերտների հոգեբանական և ֆիզիկական առողջության և անվտանգության պահպանումը կրթական ամբողջ գործընթացում: /Կազմակերպել տարբեր բնույթի միջոցառումներ/:	Տարվաընթացքում	Հոգեբան
20	Ախտորոշիչ, շտկող-զարգացնող, խորհրդատվական, լուսավորչական, կանխարգելիչ աշխատանքներ՝ ըստ անհրաժեշտության	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ Դասղեկ-դասվարներ
21	Աշխատանքներ տանել ուղղված տարբեր դասարանների աշակերտների փոխհարաբերություն ներին:	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ Դասղեկ-դասվարներ Ուսուցչի օգնակ.
22	«Ամսվա սկզբունքը»նախաձեռնություն	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ Դասղեկ-դասվարներ
23	Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրել աշակերտների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկու-թյունների, ընտանեկան փոխհարաբերությունների ազդե-ցությունը աշակերտների վրա: Կատարել տնայցեր և ըստ այդմ կազմել միջամտության պլան:	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ Դասղեկ-դասվարներ
24	Համագործակցել տարբեր ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ՝ ի շահ աշակերտների կարիքների պաշտպանության:	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ
25	Անհրաժեշտության դեպքում մասնակցել դասղեկական ժամերին, սովորողների և դասղեկի հետ քննարկել նախապես որոշված թեմաներ:	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ
26	ԿԱՊԿՈՒ սովորողների փաստաթղթերի վարում, տարեկանպատակների սահմանում, արդյունքների ամենամսյաամփոփում Ամենշաբաթյա հոգեբանականաջակցություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին	Տարվա ընթացքում	Հոգեբան Սոց. մանկավարժ

27	«Ամսվա սկզբունքը» նախաձեռնություն յուրաքանչյուր ամիս որևէ կարևոր սկզբունքի ընտրությունև կիրառում	Տարվա ընթացքում	2-րդ դասարանի աշակերտներ, դասվար
28	Տարեցների միջազգային օր(հոկտեմբերի 1)	Հոկտեմբեր	2-4-րդ դասարաններ ի աշակերտներ,
29	Մեթոդական և վերլուծական աշխատանքներ հոգեբանության հետ միջառարկայական կապի ամրապնդում	Տարվա ընթացքում	Հոգեբան
30	Իրականացված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն տնօրենին՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին:	1-ին և 2-րդ կիսամյակ	1-ին դասարան Հոգեբան շակերտներ